ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՏՈՀՄԱԾԱՌԸ

Լյուդվիգ Խաչատրյան

Ազգային գաղափարախոսության անհրաժեշտության մասին վերջին տարիներին մեզանում պարբերաբար ծագող և շրջանառվող քննարկումները ցույց են տալիս կարևորագույն խնդրի գոյությունը: Այլ բան է, որ նման քննարկումները չեն բերում էական, գործնական եզրահանգումների: Արդյունքում՝ հայտնվում ենք մի հակասական իրավիճակում, երբ համարյա բոլորը իրավացիորեն զգում են ազգային-պետական կեցության գաղափարական հենքի պակասը, բայց մյուս կողմից՝ ոչ մի կերպ չի հաջողվում լուրջ խոսակցություն բացել այդ խնդրի շուրջ: Նման պարագայում բնական հարց է ծագում, թե ինչու: Առանց այս հարցին պատասխանելու, մեր խարխափումները կարող են երկար շարունակվել:

Մեր համոզմամբ, նման անորոշության գլխավոր պատճառներից մեկն այն է, որ ճշգրտված չէ, թե ինչի մասին է խոսքը, որ երևույթը նկատի ունեն, երբ խոսում են ազգային գաղափարախոսության մասին: Մի դեպքում դա դիտարկվում է որպես հազարամյակների ընթացքում ձևավորված մի արտանյութական, տեսական դրույթների համակարգ, մյուսում էլ՝ որպես առօրյա խնդիրների լուծմանն ուղղված գործնական հրահանգների յուրահատուկ տեղեկատու: Սա ցույց է տալիս, որ անհրաժեշտություն կա առանձնահատուկ ուշադրություն դարձնել քննության առարկա երևույթի ճշգրիտ սահմանումներին ու ձևակերպումներին:

Ստորև ներկայացնում ենք տվյալ երևույթը բնութագրող հասկացությունների բովանդակության և նրանց փոխադարձ կապի մեր ընկալումները: Անհրաժեշտ է նշել, որ ներկայացվող հասկացություններն ու դատողությունները կիրառելի են ցանկացած քիչ թե շատ կայացած ազգի համար: Դա բխում է այն ընդհանրություններից, որոնք բոլոր ազգերին՝ ողջ բազմազանությամբ հանդերձ, միավորում են մի համամարդկային ընտանիքի մեջ:

Մենք համարում ենք, որ ազգային առանձնահատկություններն ընդհանրապես չեն կարող գնահատականների կամ ենթադրյալ առավելությունների թվարկման հիմք հանդիսանալ: Եվ եթե ինչ-որ պարագաներում համեմատությունների անհրաժեշտություն է առաջանում, ապա դա պետք է անել առանձնահատկությունների, այլ ոչ թե ընդհանրությունների մեջ:

Որևէ ազգային հատկանիշ ենթակա չէ «լավ է»-«վատ է» տիպի գնահատականների, որովհետև ազգերը հետաքրքիր են ոչ թե նմանություններով, այլ՝ տարբերություններով:

Այսպիսով, վերադառնալով «ազգային գաղափարախոսություն» եզրին՝ նշենք, որ դրան զուգահեռ, հաճախ որպես հոմանիշ, օգտագործվում են «ազգային գաղափար», «ազգային ծրագիր», «ազգային առաքելություն» եզրերը: Այժմ անդրադառնանք այս հասկացություններին՝ ճշտելով յուրաքանչյուրի բովանդակությունն ու նրանց փոխադարձ կապը: Անկասկած է, որ դրանք մի տարողունակ երևույթի տարբեր բաղադրիչների արտացոլումն են, որոնք ի հայտ բերելու միջոցով միայն կմոտենանք բուն խնդրի էությանը:

1. Ազգային գաղափար

Յուրաքանչյուր ազգի համար սա աստվածային նախախնամությամբ սահմանված կոչում և գոյական ուղի է՝ ներդրված նրա ծագման և գոյության իմաստի մեջ: Ազգային գաղափարը վերժամանակային առաջադրություն է, որը ձևակերպում է ազգի ամենահիմնարար առանձնահատկությունները, որոնք ինվարիանտ են պատմական ժամանակաշրջանների նկատմամբ: Այն բացահայտում է գոյության նախաստեղծ իմաստը և չի կարող փոխվել մարդկանց խմբերի և, նույնիսկ, ողջ ազգի կամայական որոշումով: Այս հասկացությունը մյուսների հիմքն է և պատկանում է այն հասկացությունների թվին, որոնք արտահայտելով նախնական, հաճախ նաև ներզգայական իմաստներ՝ դժվարությամբ են սահմանվում: Այն անպայման հզոր բարոյական լիցք է կրում և կոչված է կողմնորոշիչ հանդիսանալ ազգի ողջ պատմության ընթացքում:

Եթե ազգը կարողանում է ճշտորեն ընկալել ազգային գաղափարի ողջ էությունն ու խորհուրդը և իր պատմական ընթացքի մեջ հավատարիմ մնալ դրան, ապա գործ ունենք իր մեջ ներդրված ողջ կենսական ներուժը հետևողականորեն և արդյունավետ դրսևորման ձգտող հավաքականության հետ: Հակառակ պարագայում անխուսափելի են պատմական զանազան վայրիվերումներն ու կորուստները: Կարելի է ասել, որ ազգային գաղափարն առավել հակիրճ պատասխանում է հայտնի բանաձևի առաջին՝«ովքե՞ր ենք մենք» հարցին՝ ձևակերպելով ամենագլխավոր և առանձնահատուկ հատկանիշը: Այս համատեքստով բավականին դիպուկ և տարողունակ է ռուս մտածող Վ.Սոլովյովի հետևյալ ձևակերպումը. «Ազգային գաղափարը ոչ թե այն է, թե ինչ է մտածում ազգը իր մասին ժամանակի մեջ, այլ՝ թե ինչ է մտածում նրա մասին Աստված՝ հավերժության մեջ»: Եվ եթե

ազգն իր ընթացքի մեջ հավատարիմ և նախանձախնդիր է իր ծագման և գոյության խորհրդին, նա պետք է ստանձնի և կրի այդ խորհրդից բխող որոշակի պարտավորություններ, որոնց ձևակերպումը մեզ բերում է «ազգային առաքելություն» հասկացությանը:

2. Ազգային առաքելություն

Ազգի ծագման խորհուրդը՝ նախաստեղծ նպատակային առաջադրությունը բացահայտելիս ի հայտ է գալիս այն համամարդկային գործառույթը, որը բխում է ազգային գաղափարի անխաթար ընկալումից: Այլ խոսքով, եթե հասկանալի է ազգի ստեղծման, առաջացման խորհուրդը, ապա այդտեղից բխում է, թե ինչի համար է ստեղծված: Այն տվյալ ազգին առանձնահատուկ, նրա ծագումից բխող, նրա մեջ ներդրված հիմնական կենսական գործառույթն է: Եվ եթե ազգը համակված է այդ գործառույթն առավելագույնս անխաթար, աներեր և հետևողականորեն իրագործելու գիտակցությամբ և կամքով, ապա գործ ունենք մի երևույթի հետ, որը մենք կանվանենք ազգային առաքելություն: Ինչպես ցանկացած առաքելություն, այն նույնպես իր էությամբ նշանակում է իրագործման հանձնառություն և պարտականություն:

Ազգային առաքելություն հասկացությունը նույնպես պատասխանում է «ովքե՞ր ենք մենք…», նաև՝ «որտեղի՞ց ենք գալիս» հարցերին՝ «ինչո՞ւ» ենթատեքստով: Այն նույնպես անփոփոխ է վերջնական միտվածության առումով, բայց կախված է համամարդկային պատմական ընթացքի ճշգրիտ ընկալումից և այդ ընթացքի մեջ ազգի պարտավորություններից ու պարտականություններից: Քանի որ մարդկային գոյության պատմական ընթացքն իր մարտահրավերներն է նետում բոլորին, այդ համաշխարհային գործընթացների մեջ ազգին առաջադրվող խնդիրներն առավելագույնս արդյունավետ լուծելու համար անհրաժեշտ է, որ ազգային հավաքականության բոլոր բաղադրիչները՝ ընդհուպ մինչև յուրաքանչյուր անձ, գիտակցեն լուծման համար անհրաժեշտ, նախնական պարտավորություններից բխող հատկանիշների համակարգի էությունը: Այդ բանն ապահովում է «ազգային գաղափարախոսություն» հասկացությունը:

3. Ազգային գաղափարախոսություն

Այս հասկացությունը պատասխանում է «ո՞ւր ենք գնում» հարցին՝ նկատի ունենալով հարափոփոխ աշխարհում ազգի պատմական ընթացքի միտվածությունը, ինչպես նաև այդ ընթացքի հավատարմությունը «ազգային գաղափար» և «ազգային առաքելություն» հասկացություններին:

Ակնհայտ է, որ պարտականությունների լիարժեք կատարումը, բացի

նպատակային միտվածությունից, պահանջում է նաև տվյալ պատմական պահի առանձնահատկություններին համապատասխան գերակա հատկանիշների համախումբ: Ազգային գաղափարախոսությունն ընդգրկում է հենց այդ գերադասելի հիմնական հատկանիշներն ու պահվածքը՝ որպես նպատակային համալիր կենսակերպ: Այսպիսով, ազգային գաղափարախոսությունը տվյալ ազգի և նրան պատկանող անհատների բարոյական և ֆիզիկական կենսակերպի վարքականոնների գաղափարական, արժեքային համակարգ է՝ ուղղված արտաքին և ներքին հարափոփոխ պայմաններում ազգային գաղափարից և առաքելությունից բխող սեփական իդեալներն ու առանձնահատկությունները պահպանելուն, զարգացնելուն և ազգային տեսակի պահպանմանը: Իհարկե, այսպիսի ձևակերպումը ենթադրում է, որ տվյալ ազգը և նրա անհատները տեղյակ են և ձգտում են հավատարիմ մնալ «ազգային գաղափար» և «ազգային առաքելություն» հասկացություններին և լրջորեն տոգորված են ազգի՝ որպես հոգևոր ու կենսաբանական տեսակի, պահպանման և զարգացման, այսինքն՝ ճշմարիտ սերնդափոխության կամքով՝ հիմնված նախնյաց ժառանգության և համամարդկային կենսափորձի վրա: Ազգային գաղափարախոսությունը տվյալ պատմական շրջանի համար ուղենիշային արժեքային համակարգ է՝ ռազմավարական ուղղվածությունը պահպանելու, մարտավարական խնդիրները վերլուծելու և, դրան հանգույն, ընթացիկ գործունեությունն իրականացնելու համար:

Երբ այս հարցերում պարզություն է մտցված, տրված են «ո՞ւր ենք գնում» հարցի պատասխանները, առաջ է գալիս մի այլ հարց՝ ինչպե՞ս: Դրա պատասխանն է, որ մեզ բերում է հաջորդ՝ «ազգային ծրագիր» հասկացությանը:

4. Ազգային ծրագիր

Ընթացիկ կյանքի առաջադրած բոլոր տեսակի խնդիրները ինչպես յուրաքանչյուր անհատին, այնպես էլ բոլոր ազգերին դնում են դրան համարժեք և արդյունավետ արձագանքելու պարտադրանքի առջև: Ինչպես որևէ անձ առօրյա կյանքում, ելնելով իր կենսագրությունից, ձգտումներից, նախասիրություններից, ապագայի սեփական պատկերացումներից, պլանավորում է իր գործունեությունն իր իդեալներին և շահերին համապատասխան, այնպես էլ ազգերն են որոշում իրենց անելիքները մարդկության համաշխարհային ընթացքի մեջ և ջանում են կենսագործել դրանք: Ուղղակի այս պարագայում պլանավորման, որոշումներ կայացնելու և դրանք իրագործելու մեխանիզմներն անհամեմատ բարդ են և ենթադրում են կազմակերպվածության շատ բարձր մակարդակ: Նման կազմակերպվածության առայժմ հայտնի ամենագործուն ձևը ազգային պետականությունն է: Պետականու-

թյունը և ազգային ծրագիրը սերտորեն փոխկապակցված են և իդեալում ենթադրում են պետական կառույցի ու հասարակության առավելագույն փոխըմբռնում և փոխադարձ վստահության մեծ պաշար: Միայն այսպիսի պայմաններում է հնարավոր լուրջ ազգային ծրագրի մշակումը և կենսագործումը: Ակնհայտ է նաև, որ պետականությունն ինքը պետք է ամբողջովին ներծծված լինի ազգային գաղափարի, առաքելության և գաղափարախոսության սկզբունքներով:

Նույնիսկ պետականության առկայության դեպքում ազգային ծրագրի իրագործումն անհնարին է առանց հոգևոր և բարոյական համապատասխան միջավայրի: Այն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է մեծ խնդիրներ առաջադրելու և լուծելու համար: Այսպիսով, ազգային ծրագիր իրագործելու համար անփոխարինելի գործոններ են անհրաժեշտ միջավայրը և առավելագույն կազմակերպվածությունը:

Նախքան վերը ներկայացված հասկացությունների որոշակիացումը հայկական իրականության պայմաններում, փորձենք դրանք ներկայացնել հնարավորինս հակիրճ ձևակերպումներով:

Այսպիսով, ազգային գաղափարը աստվածային, ազգային տեսակը տարբերակող առանձնահատուկ շնորհ է (կամ շնորհների համակարգ), աստվածային ծրագիր:

Ազգային առաքելությունը այդ շնորհից և ծրագրից բխող պարտավորություն և պարտականություն է՝ ստանձված Աստծո, մարդկության և սեփական ապագայի առջև:

Ազգային գաղափարախոսությունը ազգային տեսակի հարատևման ձգտումից և առաքելության պարտականություններից բխող հատկանիշների ու կենսակերպի արժեքային և գաղափարական համակարգ է:

Ազգային ծրագիրը ազգային գաղափարի, առաքելության և գաղափարախոսության կենսագործման գիտակցված և հետևողական գործողությունների համակարգ է՝ տրված ներկա և հաջորդ սերունդներին՝ որպես շարունակական և նպատակամղված ուղենիշ:

5. Հայկական իրողություններ

Տեսնենք, թե ինչ որոշակիություն կստանան վերը բերված ընդհանուր դատողություններն ու ձևակերպումները հայոց պատմական իրողությունների պարագայում: Այստեղ մեր ջանքերի արդյունավետությունն էապես կախված է մեր դատողությունների հիմքում դրված պատմագիտական հայեցակարգից, ավելի ստույգ՝ հայ ժողովրդի պատմության ներկայացման մի շատ վճռորոշ հարցից՝ հայերը բնի՞կ են, թե՞ եկվոր: Մինչև XIX դարի կեսերն այսպիսի հարցադրում ընդհանրապես չկար, քանի որ և՛ հայերի, և՛

եվրոպական հասարակական գիտակցության մեջ ամրագրված էր դարերից և հազարամյակներից եկող մի անառարկելի համոզմունք. հայերն արարչական օրերից են ապրում Հայկական լեռնաշխարհում, և նրանց երկիրը մարդկության ծննդի և փրկության վայրն է:

Սակայն, XIX դարի 2-րդ կեսին մինչ այդ անտարակուսելի համարվող այս հայեցակարգը սկսեց կտրուկ վերաքննության ենթարկվել, և դա իր համառ ու հետևողական շարունակությունն ունեցավ ողջ XX դարի ընթացքում: Այս երևույթի հիմնական պատճառները մի քանիսն էին, և դրանց մի մասը դեռ շարունակում է վճռորոշ ազդեցություն ունենալ արդի համաշխարհային պատմագիտության վրա:

Ինչպես կտեսնենք, դրանք մեծ անդրադարձ ունեցան և ունեն հայկականության երևույթի և հայ ազգի ճակատագրի համար:

Այսպես կոչված եվրոպական լուսավորչական շարժման «հաղթական» ալիքի վրա և լիբերալ-աթեիստական մտայնության հետևանքով XIX դարում գիտությունից, մասնավորապես՝ պատմագիտությունից արդեն արտաքսվել էր գոյակարգի աստվածային մոդելը: Դա բերեց պատմագիտության ծայրահեղ աշխարհիկացման՝ այն վերածելով հիմնականում քաղաքական և, որոշ չափով, սոցիալական պատմության: Հնագույն ժամանակներից հասած դիցաբանական, բանահյուսական, էպիկական, ավանդութային և դավանական նյութերը լավագույն դեպքում սկսեցին դիտարկվել որպես զուտ մշակութային շերտ և կասկածելի աղբյուր՝ հավաստիության առումով: Այսպես անտեսվում էր այն վիթխարի և բազմաշերտ տեղեկատվությունը, որ պարունակվում է նման նյութի մեջ, և ինչպես գնալով պարզվում է՝ իր հավաստիությամբ առնվազն չի զիջում նյութական, հնագիտական աղբյուրներին:

XIX դարում հնագիտական հայտնագործությունների կտրուկ աճը, նորահայտ հնագիտական նյութերի առատությունը և դրանց կամայական մշակումը նպաստում էին հապճեպ կառուցվող մակերեսային պատմական մոդելների արագ տարածմանը՝ ի հաշիվ հասարակական մեծ հետաքրքրության: Հնագիտական նոր նյութի ավելացող ծավալի և եվրոպական պատմաբաններին միակ հասանելի ու ընկալելի հունա-հռոմեական և, որոշ չափով, աստվածաշնչյան աղբյուրների ընդգրկման ակնհայտ անհամաչափելիությունը բնավ չէր նպաստում օբյեկտիվ պատմական մոդելի ձևավորմանը: Եվրասնապարծության և շտապողականության մթնոլորտում ստեղծված նորաթուխ վարկածները հետևողականորեն ներդրվեցին եվրոպական կրթական և գիտական համակարգի հիմքում՝ այդպիսով վերածվելով պատմագիտական դոգմատիկ մոդելների: Եվ այսօր առկա է արդեն կարծրացած գիտակրթական մի համակարգ, որը թշնամաբար և արհամարհանքով է վերաբեր-

վում ինչպես ավանդական պատմագիտական մոդելի վրա խարսխված ցանկացած մտածողության, այնպես էլ գիտական այլախոհության որևէ դրսևորմանը: Դրությունը չեն փոխում նաև հետագա բազմաթիվ արժեքավոր հնագիտական և այլ հայտնագործությունները, որոնք, կասկածելի համառությամբ, փորձ է արվում տեղավորել արդեն իսկ քարացած շրջանակներում՝ անտեսելով դրանից բազմացող հակասությունները:

Այստեղ էական դեր են խաղում նաև որոշակի քաղաքական շահագրգռություններ, ինչն ավելի է խճճում այդ մոդելով ներկայացվող հնագույն աշխարհի՝ առանց այդ էլ խիստ աղճատված պատկերը: Կարծես թե ամեն ինչ արվում է, որ մարդկային քաղաքակրթության օրրանը չունենա կենդանի ժառանգորդ: Հին աշխարհի խառնաշփոթի մատնված այդ պատկերի մեջ բացակայում են հայերն ու հայկական պետականությունը, և, ըստ այդ վարկածի, նրանք պատմական թատերաբեմում հանկարծակի հայտնվում են Ք.ա. VI դարում՝ անհայտ տեղից և անհասկանալի ձևով: Այս վարկածը ոչ միայն ամբողջովին հակասում է ողջ հայ պատմագրությանը, ավանդությանը և օտար բազմաթիվ աղբյուրների տվյալներին, այլև անլուծելի հակասությունների գիրկն է նետում ողջ հայեցակարգը՝ մեծ խառնաշփոթ առաջացնելով նաև համեմատական լեզվաբանության, լեզվի պատմության, հնագիտության, պատմական աշխարհագրության, դիցաբանական և մշակութաբանական ուսումնասիրությունների և այլ ոլորտներում: Արդյունքում՝ այդ մոդելով հայությունն արտաքսվեց իր բնօրրանից և սեփական պատմությունից: Դա, ըստ էության, քաղաքակրթական եղեռն էր հայության և հայկականության հանդեպ և հետագայում իրագործված ֆիզիկական եղեռնի գաղափարական նախապատրաստումը:

Ցավոք, հետագայում այդ արատավոր նորամուծության ներդրումն ավանդական պատմագրությամբ ձևավորված հայ ազգային գիտակցության մեջ կատարվեց նաև եվրոպական և խորհրդային կրթություն ստացած որոշ հայ գիտնականների ջանքերով, կայուն տեղ գրավեց նաև հայ կրթական և գիտական համակարգում, ստեղծվեց «պաշտոնական» կարգավիճակով պատմագրական մի դպրոց, որի հետևորդների համար այժմ հոգեբանական, մտածողական, բյուրոկրատական և գիտական առաջխաղացման հետ կապված ահռելի դժվարություններ կան՝ վերադառնալու ազգային գիտական ավանդույթի շրջանակները: Այդ է պատճառը, որ այդ շերտը, ունենալով զգալի վարչական ներուժ, բավականին ագրեսիվ է հակազդում նույնիսկ օտար գիտնականների այն աշխատանքներին, որոնք բացահայտում են «պաշտոնական» տեսության աղաղակող հակասությունները՝ հաստատելով ավանդական պատմագիտության անբասիր հավաստիությունը: Այստեղ ոչ երկրորդական դեր են խաղում նաև որոշակի օտար, նաև քաղաքա-

կան շրջանակների կողմից ցուցաբերվող աջակցության այլազան մե-թոդ-ները՝ ուղղված «պաշտոնական» դիրքորոշում ունեցող գիտնականների նյութական և վարչական դիրքերի ամրապնդմանը ժամանակակից հայա-գիտության մեջ:

Այս խիստ անհրաժեշտ միջարկումից հետո անցնենք բուն նյութին, այն է՝ ի՞նչ են նշանակում հայ ժողովրդի համար ազգային գաղափար, առաքելություն, գաղափարախոսություն և ծրագիր հասկացությունները: Մեր հետագա դատողությունների հիմքում դրված են գոյակարգի աստվա-ծային մոդելին համապատասխանող ավանդական պատմագիտությունը և մարդկության պատմության հնագույն շրջանին վերաբերող նորահայտ նյութերի և հետազոտությունների արդյունքները[1]:

6. Հայոց ազգային գաղափարը

Երբ ծանոթանում ենք մեզ հասած պատմական աղբյուրներում առկա հայկա-կան ներկայության ծավալներին, ակնհայտ է դառնում այն մեծ դերակատա-րությունը, որ հնագույն ժամանակներից ունեցել են հայերն ու Հայքը: Ասելով հայեր և Հայաստան՝ մենք հաշվի ենք առնում նաև այն, հաճախ արհես-տածին, բարդությունները, որոնք կապված են այդ հեռավոր ժամանակների դերակատար ազգերի ու պետությունների նույնադրման (իդենտիֆիկացիա) հետ: Դիտարկելով նույնիսկ միայն այն հիշատակումները, որոնք ընդունվում են անգամ «պաշտոնական» պատմագիտության կողմից, ակնհայտ է դառնում հայկականության վիթխարի դերը հնագույն աշխարհում, մանավանդ նոր հայտնագործությունների և հետազոտությունների լույսի ներքո: Ինչ արժեն թեկուզ այն նշանակությունն ու որակումները, որ տրված են հայերին և Հայկական լեռնաշխարհին հարևանների կողմից. դրախտի երկիր, արևելքի ազգ, արարչության վայր, սուրբ օրենքների և սուրբ ծեսերի պահապան երկիր ու ժողովուրդ, աստվածների ժողովի վայր, մարդկության փրկության երկիր, անմահության երկիր և այլն: Համաձայնենք, որ միայն համատարած և անա-ռարկելի իրողությունը կարող էր ստիպել այդ հարևաններին՝ մարդկության համար այդ կարևորագույն և պատվաբեր արժեքներն ու հատկությունները վերագրել ոչ թե իրենց, այլ մի ուրիշ ժողովրդի ու երկրի, այն էլ այդպես միաձայն և անվերապահ: Ի տարբերություն հայտնի մի քանի ազգերի, որոնք իրենք են իրենց համարում ընտրյալ ազգ, իսկ իրենց երկիրը՝ սրբազան հող, մեր դեպքում դա պնդում են հաճախ ոչ բարեկամաբար տրամադրված

[1] Հարկ ենք համարում նշել, որ մեր պնդումներն ու եզրակացությունները լիովին հիմնավորված են: Ուղ-ղակի այս գրության նպատակին, ոճին և ձևաչափին հարմար չէր լինի բազմաթիվ աղբյուրների և համո-զիչ պատմական փաստերի թվարկումը: Դա կարելի է անել, երբ անհրաժեշտություն ծագի մանրամասն քննել ողջ առաջադրված հայեցակարգը:

օտարները: Եվ սա շատ կարևոր առանձնահատկություն է:

Հատկանշական է, որ համաշխարհային քրիստոնեությունը ևս նույնությամբ պահպանեց մեր երկրի աստվածային և համամարդկային նշանակության ընդգծումը՝ մարդկության գոյության երկու սկզբնավորումն էլ (դրախտ և Նոյան տապան) կապելով հայկական տարածքի հետ: Իսկ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ սկսած սբ. Եղիշեից մինչև սբ. Գրիգոր Տաթևացի, և մինչև օրս, հպարտությամբ և արժանապատվությամբ է մատնանշում մեզ բաժին հասած այդ աստվածային շնորհը: Եվ ընդհանրապես, հայ նախաքրիստոնեական և քրիստոնեական մշակույթն ու քաղաքակրթությունը ծայրից ծայր ներծծված են հայկականության արարչական և համամարդկային դերի սթափ, պատասխանատու, արժանապատիվ զգացողությամբ, գիտակցությամբ և ոգով:

Այսպիսով, ազգային գաղափարի մեր սահմանման համաձայն, որպես պատասխան «ովքե՞ր ենք մենք…» հարցի, կարող ենք ասել հետևյալը. հայերը՝ որպես բնիկներ, վաղնջական ժամանակներից, հազարամյակներ շարունակ ապրել են Հայկական լեռնաշխարհ կոչվող տարածքում, որտեղ, ըստ հնագույն աղբյուրների և ավանդությունների, Աստված արարել և բնակեցրել է մարդուն՝ որպես նրա բնօրրան, որտեղից էլ սկիզբ է առել մարդկության պատմությունը: Այդ տարածքը Աստված տվել է հայերին ի պահպանություն՝ որպես Հայրենիք: Այստեղ են պահ տրվել նաև սուրբ օրենքներն ու սուրբ ծեսերը, այստեղից է ծագել աստվածային Լույսը (Արևելք), այստեղ է պահվել իմաստության և անմահության գաղտնիքը, այստեղ է իր փրկությունը գտել մարդկությունը՝ ի դեմս Նոյի, այստեղ է Աստծո և մարդու միջև հաստատվել հավերժական Ուխտը:

Ահա սա է, որ աստվածային նախախնամությամբ տրվել է հայությանը ի պահպանություն, և սա է այն գլխավոր հատկանիշը, որ տարբերում է հայերին ու Հայքը մյուս հին ու նոր ազգերից ու պետություններից: Սա հայության գոյության հիմքում դրված, առավելագույնս պարտավորեցնող գլխավոր առանձնահատկությունն է: Ինչպես տեսնում ենք, այս իրողությունները կախված չեն մեր կամքից ու ժամանակից, և որևէ կերպ հնարավոր չէ դրանց ձևափոխումը կամ հրաժարումը դրանցից: Սա մեր ազգային գաղափարն է:

Հետևաբար, երբ XIX դարում շրջանառության մեջ դրվեց հայերի եկվորության վարկածը, ապա փաստորեն փորձ արվեց հայությանը զրկել ազգային գաղափարից: Եվ այժմ ցանկացած ջանք՝ գործադրված որևէ հայ կամ օտար անձի կամ խմբի կողմից՝ տարածելու այդ արատավոր վարկածը, պետք է դիտարկել որպես հայությանն իր գոյության նախահիմքից՝ ազգային գաղափարից զրկելու փորձ:

Ցանկացած արժեքավոր, մանավանդ հոգևոր լիցք կրող գաղափար ժամանակի ընթացքում ձեռք է բերում իր խորհրդանիշը: Համարյա բոլոր ժողովուրդներն էլ ունեն իրենց ինքնության խորհրդանիշները: Մեր պարագայում առկա են կարևոր առանձնահատկություններ: Հետևաբար, անդրադարձ կատարենք մեր ազգային գաղափարի երեք մեծագույն խորհրդանիշներին՝ Մասիս լեռանը, խաչին, լեզվին ու այբուբենին և նրանց առանձնահատուկ բնույթին:

7. Մասիս կամ Արարատ լեռը

Հայոց պարագայում այս խորհրդանիշը այնքան անառարկելի է, այնքան հզոր ոգեղեն ու անվրեպ ազդեցություն ունի յուրաքանչյուր հայորդու և, նույնիսկ, ոչ հայի վրա, այնքան հնուց է կրում այդ գործառույթը, որ դժվար է նման երկրորդ երևույթ գտնել: Մասիսը աստվածային, հավերժական ու շարունակական ուղերձ է հայերին ու ողջ մարդկությանը՝ փրկության ու հավերժական ճշմարտությունների մասին: Սա այն աննախադեպ իրողությունն է, երբ ազգային սրբազան խորհրդանիշն այդպիսին է նաև համայն մարդկության համար: Այսպիսի համամարդկային մի ուրիշ խորհրդանիշ իրոք չկա: Այն կարծես իր տեսքով ու դիրքով կոչված է անընդհատ հիշեցնել հայերին ու մարդկությանը, թե ովքեր ենք մենք և որն է մեր ազգային գաղափարը: Նաև խորհրդանշական է, որ մեր ճշմարիտ պատմության առևանգման փորձի հետ միաժամանակ կատարվեց մեր ազգային գաղափարի այդ խորհրդանիշի ֆիզիկական գերեվարումը: Եվ մենք կվերադարձնենք մեր սրբազան լեռը, երբ լիովին տեր կկանգնենք մեր սկզբնական պատմությանը և աստվածատուր ազգային գաղափարին:

8. Խաչը

Մեր առանձնահատկությունն այն է, որ ունենք ազգային գաղափարի ևս մեկ համարժեք խորհրդանիշ՝ Աստծո և աստվածային լույսի նշան խաչը:

Խաչի համաքրիստոնեական խորհրդանշան դառնալու փաստը չպետք է մեզ խանգարի նշելու այն կարևոր իրողությունը, որ Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքը ծայրից ծայր լեցուն է վաղնջական սրբազան նշանի՝ խաչի պատկերներով՝ դեռ քրիստոնեական դարձից շատ ավելի առաջ: Եվ եթե մյուս քրիստոնյաների համար խաչը Հիսուս Քրիստոսի երկրային մահվան գործիքի սրբագործված նշանն է միայն, ապա խաչապաշտ հայոց համար այն ի սկզբանե եղել է Աստծո և նրա ճշմարտության լույսի խորհրդանիշը: Սա երկրորդ ազգային խորհրդանիշն է, որ լինելով

մեր ազգային գաղափարի խորհրդանիշը, դարձել է նաև համամարդկային: Նկատի ունենալով հնագույն ժայռապատկերներից մինչև մեր օրերը ստեղծված խաչի պատկերների առկայության ծավալները մեր պատմական տարածքում՝ հարկ է փաստել, որ աշխարհի մնացած ողջ տարածքում չկա խաչի այնքան պատկեր, որքան միայն Հայկական լեռնաշխարհում:

Ազգային գաղափարի երրորդ խորհրդանիշը հայոց լեզուն և աստվածապարգև, մաշտոցյան կատարյալ այբուբենն է:

Եվ հայը գոյություն ունի այնքան ժամանակ, քանի դեռ տոգորված է ազգային գաղափարով և իր սրտում կրում է խաչը, մտքում՝ Մասիսը և շուրթերին մեսրոպատառ խոսքը:

Այսքանը՝ հայոց ազգային գաղափարի մասին:

Պարզենք, թե ինչ է նշանակում մեզ տրված աստվածային առանձնահատուկ շնորհը: Ամենից առաջ դա պարտականություն է և պարտավորություն: Հետևաբար, առանձնաշնորհի արժանանալը ենթադրում է որոշակի նպատակների, ուղղվածության և կենսակերպի հետևողական, աննահանջ իրագործում: Ուրեմն պարզենք, թե ինչ համամարդկային գործառույթ կատարելու, ինչ առաքելության են կոչված մեր ազգն ու երկիրը՝ արժանանալով նման շնորհը կրելու պատվին:

9. Հայոց ազգային առաքելությունը

Նախ, ի՞նչ է նշանակում՝ մեզ տրվել է որպես Հայրենիք այս սրբազան տարածքը, և այնտեղ պահ են տրվել սրբազան օրենքներն ու ծեսերը: Դա մեզ համար պետք է նշանակի անձնվիրաբար պաշտպանել հայրենի տարածքն ամեն տեսակ հոգևոր ու ֆիզիկական ոտնձգություններից, հետևել աստվածային օրենքներին ու խրատներին՝ որպես կենսական ճշմարտություններ, և տանել հասցնել դրանք մյուսներին:

Բազմաթիվ փաստեր վկայում են, որ հազարամյակներ շարունակ հայությունը պատվով և նախանձախնդրությամբ կատարել է իր այդ առաքելությունը՝ վաստակելով քաղաքակրթված աշխարհի անկեղծ հարգանքն ու համակրանքը: Մարդկային քաղաքակրթության շրջանակներում տեղավորվող որևէ հին կամ նոր ազգի, պետության պատմությունը դիտարկելիս՝ այնտեղ անպայման կգտնեք հայերի և հայկականության որոշակի հիշատակում, մեծ մասամբ ակնածանքով և համակրանքով՝ իրենց երկրին հայերի բերած նպաստի և վաստակի համար:

Աղբյուրները վկայում են, որ հազարամյակներ շարունակ Հայկական լեռնաշխարհից բոլոր ուղղություններով պարբերաբար մարդկային, հո-

գևոր և մշակութային հզոր ալիքներ են տարածվել՝ հասնելով երկրագնդի ամենահեռավոր անկյունները: Աստվածաշնչյան Ադամի, ապա Նոյի սերունդների տարածման պատմությունը, արդի գիտության կողմից առաջադրվող հնդեվրոպական քաղաքակրթության ձևավորման մոդելը այդ իրողությունների ամենաակնառու հաստատագրումն են: Այդ մասին անչափ կարևոր տեղեկություններ են պարունակվում զանազան ժողովուրդների պատմական հիշողության մեջ՝ բանահյուսական, առասպելաբանական, պատմամշակութային և այլազան դրսևորումների տեսքով: Ցավոք, մեզանում անչափ քիչ ուշադրություն է դարձված այդ հսկայական նյութի հավաքման, համադրման, համակարգման և միասնական պատկերի մեջ ներկայացնելու խնդրին:

Երբ ամենայն ուշադրությամբ, անկեղծությամբ և առանց արհեստածին նախապաշարումների ծանոթանում ենք հայ և օտար բազմատեսակ աղբյուրների տվյալներին, ձևավորվում է մի պատմական համապատկեր, որտեղ բավականին պարզորոշ ուրվագծվում են հայության և Հայքի դերակատարությունը հնագույն աշխարհում և դրա համապատասխանությունն առաքելական նպատակին: Այս գործընթացների ժամանակագրական պատկերը, երբ համադրում ենք մեր սեփական պատմական իրողությունների հետ, նկատվում են բավականին հետաքրքրական և ուսանելի օրինաչափություններ: Հնարավորինս համառոտ անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Նախ փաստենք, որ հնագիտական նորագույն հետազոտություններն աներկբա ապացուցում են, որ Հայկական լեռնաշխարհում՝ սկսած առնվազն Ք.ա. XI հազարամյակից, առկա է և անընդհատ շարունակվել է տվյալ ժամանակաշրջանի համար ամենաբարձր և զարգացած քաղաքակրթություն: Նշենք միայն Պորտասարի, Մոխրաբլուրի, Մեծամորի, Շենգավիթի, Ագարակի, Սյունիքի հնավայրերում վերջին տարիներին կատարված պեղումների դեռ նախնական արդյունքները, Քարահունջի աստղագիտական համալիրի հետազոտման տպավորիչ արդյունքները: Անկասկած է, որ հնում հայերը միշտ էլ տիրապետել են տվյալ ժամանակաշրջանի ամենախոր գիտելիքներին և ամենաբարձր տեխնոլոգիաներին: Որ դրանց հետագա տարածման կենտրոնը հիմնականում Հայքն է, երևում է, ի թիվս այլ փաստարկների, թեկուզ այն բանից, որ այլ տեղերում նման երևույթների ի հայտ գալու ժամանակային և տարածական համադրումն ուրվագծում է մի որոշակի կենտրոնից հետզհետե տարածվելու պատկերը: Արդյունքում՝ պարզորոշ ուրվագծվում է կեցության որոշակի մոդելի տարածում բոլոր ուղղություններով, և այդ կենտրոնը, ներառելով ողջ Հայկական լեռնաշխարհը, հաստատում է

միակենտրոն քաղաքակրթության տեսության իրավացիությունը:

Սկզբնական ժամանակներում, երբ մեր ժողովուրդն անվերապահորեն նվիրված և հավատարիմ էր իր առաքելությանն ու պարտականություններին, լեռնաշխարհից կատարվող արտահոսքերը գիտակցված և նպատակամղված բնույթի էին: Բայց հենց որ ազգային գաղափարի ընկալման ինչ-ինչ աղավաղումների հետևանքով առաքելական գիտակցությունը թուլանում էր, նվազում էր նաև պարտականության զգացումը: Իսկ այդ պարտականություններն են. անձնվիրաբար պաշտպանել հայրենի աստվածատուր տարածքը հոգևոր և ֆիզիկական ոտնձգություններից, հետևել աստվածային օրենքներին՝ որպես կենսակերպ և, ապա, այդ գիտակցությունն ու հմտությունները տարածել մյուսների մեջ: Ազգային առաքելության գիտակցման թուլանալը նշանակում է թերանալ այս երեք հիմնական պարտավորություններից մեկի կամ մի քանիսի մեջ: Քննարկենք այդ դեպքերը:

Աստվածային նախախնամությամբ և ծրագրով մեզ տրված սրբազան տարածքի հոգևոր և ֆիզիկական պաշտպանության հարցում հայերի նախանձախնդրությունը գործնականում անթերի կարելի է համարել համարյա ողջ պատմության ընթացքում: Եվ եթե ինչ-ինչ ժամանակներում, արտաքին բիրտ ուժերի չդադարող հարձակումների արդյունքում տարածքային ժամանակավոր ընկրկումներ են եղել, ինչի հետևանքով սրբազան տարածք են թափանցել ու հաստատվել օտար ցեղեր, միևնույն է, մինչև XIX դարի վերջերը հայերը շարունակում էին բնակվել ողջ Հայկական լեռնաշխարհում:

Ինչ մնում է հոգևոր տարածքի պաշտպանությանը, ապա այստեղ մեր ժողովրդի պայքարն իր հոգևոր նախահիմքերի և արժեքային համակարգի համար գործնականում անընդմեջ է եղել ողջ պատմության ընթացքում: Այլ բան է, որ չդադարող արտաքին էքսպանսիայի պատճառով ստեղծվող անբնական կացությանն ինչ-որ կերպ հարմարվելու ձգտումն, այնուամենայնիվ, իր հետ բերում էր զգալի խաթարումներ ներքին կյանքի կազմակերպման սկզբունքների մեջ՝ առաջ բերելով կեցության աստվածային օրենքներից հեռանալու վտանգավոր միտվածություն:

Չնայած պատմության այսպիսի ընթացքը բերում էր առաքելական ներուժի զգալի նվազման, առաքելական երրորդ, ինչ-որ իմաստով մեխանիկական բաղադրիչը՝ արտահոսքը, պահպանվել է մի զարմանալի, հիրավի միստիկական հետևողականությամբ:

Կարծես թե անկախ այն բանից, թե հայությունը տվյալ պահին որքանով է ներքնապես պատրաստ հոգևոր-իմացական արժեքներ տարածողի իր դերակատարմանը, լեռնաշխարհից պարբերաբար տարածվում են զանգվածային արտագնա ալիքներ: Եթե ներքին կացությունը գտնվում է

հոգևոր բարվոք վիճակում, այդ կամավոր կատարվող արտահոսքերն առաքելական տրամաբանության մեջ են, և տեղի են ունենում թշնամական կամ տարերային ուժերի պարտադրանքով, երբ թույլ է, անգամ բացակայում է տանելիքի գիտակցված ներուժը: Նման դեպքերում երկրից տեղի է ունենում ոչ թե գիտակցված, ներքին հզորությունը չթուլացնող արտահոսք, այլ՝ պարզագույն արտագաղթ, ինչն անընդհատ նվազեցնում է ազգի ընդհանուր ներուժը: Նախանձախնդիր ընթերցողն ինքը կարող է նշել մեր պատմության մեջ արձանագրված նման բազմաթիվ փաստեր՝ ընդհուպ մինչև մեր օրերում, մեր աչքի առջև կատարված մեծ արտագաղթը:

Որոշակի պահերի այսպիսի ընթացքն իր հետ բերում էր հայրենիքում մնացող հայության շարունակական թուլացման, ընդհուպ մինչև պետականության կորուստ: Բայց ամենամեծ և դաժան հարվածը հայությունը ստացավ XIX դարի վերջերից սկսված և մինչև XX դարի 20-ական թվականները շարունակվող Եղեռնի հետևանքով, երբ Հայկական լեռնաշխարհի մեծագույն մասում հետևողականորեն բնաջնջվեց հազարամյակների ընթացքում ձևավորված ինքնատիպ հոգևոր-էթնիկական միջավայրը և հայությունն արտաքսվեց իր սրբազան տարածքի մեծագույն մասից: Չնայած այս հրեշավոր իրողությունն արդեն ոչ մի կապ չուներ ազգային առաքելության գիտակցված դրսևորման հազարամյակների ավանդույթի հետ, այնուամենայնիվ, աշխարհով մեկ ցրված հայության բեկորները հնարավորինս շարունակում են կատարել քաղաքակրթական իրենց դերակատարությունը՝ զգալի ավանդ բերելով իրենց ապաստան տված երկրների ընդհանուր զարգացմանը՝ կենսագործունեության բոլոր ոլորտներում:

Ինչ մնում է արդի Հայաստանի Հանրապետությանը, ապա չնայած ազգային բնականոն գոյության համար անհրաժեշտ կենսատարածքի և հոգևոր-էթնիկական միջավայրի ամբողջականության կտրուկ նվազմանը, միևնույն է, նրա առաքելական պարտականությունը ամբողջովին պահպանվում է, և պարտազանցությունն ու հրաժարումն ազգային առաքելությունից կբերի հայության և հայկականության սկզբունքային հեռացմանը պատմական թատերաբեմից: Ավելին, այժմ, քան երբևէ, անհրաժեշտ են գիտակցված կամքի և կազմակերպվածության արտակարգ բարձր մակարդակ, աշխարհով մեկ ցրված հայության ներուժի համախմբում և առաքելական խնդրի արդյունավետ լուծման ընդունակ հայկական ընդհանրական կերպարի և կենսակերպի ձևավորմանն ու դաստիարակությանն ուղղված համազգային ջանքեր: Ահա այս, կենսականորեն երկընտրանք չունեցող նպատակի իրագործման ճանապարհն անցնում է ազգային գաղափարախոսության միջով:

10. Հայոց ազգային գաղափարախոսությունը

Մեր ազգային առաքելությունն ի՞նչ պահանջներ է դնում մեր կենսակերպի սկզբունքների և մարդկային հատկանիշների վրա, և ինչպիսի՞ն են պատմական իրողություններն այդ առումով:

Որևէ երկարաժամկետ առաքելություն՝ կապված սերունդների շարունակական գործունեության հետ, ենթադրում է այդ առաքելության գիտակցման պահպանում և անաղարտ փոխանցում: Հակառակ պարագայում առաքելությունն ընդհատվում է և խափանվում: Իսկ պահպանել և փոխանցել՝ նշանակում է սերնդեսերունդ համակողմանի իրազեկել նախորդ ճշմարիտ պատմությանը, դաստիարակել և ուսուցանել այնպես, որ յուրաքանչյուր սերունդ օրգանապես զգա մի ընդհանուր պատմական շղթայի մեջ իր՝ որպես հերթական օղակի, անելիքն ու պատասխանատվությունը: Որովհետև միայն մեկ մարդկային կյանքի տևողությամբ առաջնորդվող անհատը կամ հավաքականությունը լիովին անպիտան է ոչ միայն որևէ առաքելություն կրելու, այլև պարզ մարդկային սերնդափոխություն բնական, բարոյական և արդյունավետ ձևով իրագործելու համար:

Ակնհայտ է, որ ճշմարիտ սերնդափոխության հիմքում պետք է ընկած լինեն ոչ թե մարդու հարափոփոխ անձնական նախասիրությունները, այլ նախնիներից ժառանգած կենսափորձն ու համամարդկային անանց արժեքները: Մարդկության պատմությունը ցույց է տալիս, որ բոլոր ժամանակներում, ներառյալ վերջին մոտ 200 տարիների աթեիստական որոշակի մտայնություններով հագեցած պատմությունը, որևէ ազգի կամ ժողովրդի գոյությունն անպայմանորեն խարսխված է այս կամ այն դավանական համակարգի, այն է՝ հավատքի վրա:

Ինչ վերաբերում է մեզ, ապա արդեն իսկ մեր ազգային գաղափարի և առաքելության հիմքում ներդրված են աստվածային, համամարդկային և ազգային այնպիսի հզոր և վերժամանակային ազդակներ, որ աշխարհընկալման հոգևոր-դավանական համակարգն արդեն հայկականության գոյության անհրաժեշտ անօտարելի բաղադրիչն է:

Ուշադիր և համակողմանի քննությունը ցույց է տալիս, որ հազարամյակների ընթացքում Հայկական լեռնաշխարհի հավատքային համակարգն անխափան գործել է՝ պահպանելով արարչական և աշխարհընկալման միևնույն մոդելը: Թերևս որոշ աղճատումներ եղել են Արարատյան թագավորության անկումից հետո միասնական պետականության ամրապնդման ժամանակ՝ հելլենիզմի բուռն ներխուժման և արմատավորման ժամանակներում: Այդ ժամանակներն ավարտվեցին հայոց քրիստոնեական դարձով, ինչը նշանակում էր վերադարձ սկզբնական հավատքին, նրա պարունակած արժեքային համակարգին և սեփական ինքնությանը: Իսկ

այդ հավատքը, որն ըստ էության կարելի է կոչել խաչապաշտություն կամ լուսապաշտություն, հազարամյակների ընթացքում ձևավորել էր առաքինությունների վրա հիմնված մի հզոր կենսակարգ, որը հնարավորություն էր տվել հայությանը և Հայքին ակնառու և կարևորագույն դերակատարություն ունենալ աշխարհում:

Հայկական կենսական համակարգն աչքի է ընկնում ուշագրավ հատկություններով: Գիտակցված առաքելական արտահոսքերի պարագայում դրսից ներթափանցումները կապված էին հիմնականում առանձին փոքրիկ խմբերի վերադարձի հետ, որն անխուսափելիորեն ուղեկցվում էր օտար, լեռնաշխարհի համար նոր գաղափարների ու արժեքների ներբերմամբ: Դրանց մի մասը ձևափոխվում և հարմարեցվում էր՝ օրգանապես ներառվելով սեփական արժեքային, ավանդական համակարգի մեջ, կամ մերժվում էր՝ որպես սեփական համակարգի հետ անհամատեղելի երևույթներ: Հետագայում, երբ օտար և անծանոթ գաղափարներն ու բարքերը լեռնաշխարհ էին մտնում արդեն հարևանների ռազմական ներթափանցումների հետ և, հաճախ, ունենում էին ուժային աջակցություն, հայկական կենսական համակարգը շարունակում էր գործնականում անխաթար պահել հոգևոր-բարոյական միջավայրը շնորհիվ ներքին ամրության և կայունության՝ քայքայիչ ներթափանցումների դեմ ցուցաբերելով առողջ օրգանիզմին հատուկ պաշտպանական մեծ ներուժ: Հայության բնատուր հակումը նոր գաղափարների ու երևույթների հանդեպ առաջին հերթին խարսխված է այն բանի վրա, որ ազգային գիտակցության մեջ խոր արմատներ նետած արժեքային համակարգը՝ իր հզոր ֆիլտրող կարողությամբ, զերծ է պահում ազգային ինքնությունը խեղումների վտանգից: Բայց եթե խաթարված է այդ պաշտպանիչ համակարգը, նման հակումը հղի է ծանր հետևանքներով: Երբ ազգային գիտակցության մեջ արժեքային ամբողջական համակարգը փշրված և լղոզված է, արտաքին ներթափանցումների դեմ շարունակվող բացությունը շատ արագ բերում է ազգային նկարագրի և ինքնագիտակցության կտրուկ էրոզիայի՝ ազգային հանրույթը վերածելով տարամետ անհատների մի հավաքականության, որն ընդունակ չէ մեծ խնդիրներ առաջադրել և լուծել: Նման փոշիացած վիճակում խիստ դժվարանում է ազգային մարմնի ներսում կայուն կմախք-կառույցների կայացումը: Միայն նպատակասլաց և հետևողական ջանքերի շնորհիվ է հնարավոր կայուն և արժեքակիր խտացման կետերի շուրջ ազգային-հասարակական ամբողջական և արդյունավետ միջավայրի վերականգնումը:

Ազգային գաղափարի և առաքելության գերակայությանը ենթակա կենսական համակարգի հիմքում ընկած են կեցության կազմակերպման սկզբունքները և առաքինությունների որոշակի համախումբ, որոնց ամրա-

գրումն է հենց ազգային գաղափարախոսության բուն էությունը:

Եթե կարողանանք առանձնացնել այն արժեքային համակարգի կորիզը և մարդկային հիմնական հատկանիշները, որոնց շնորհիվ, հազարամյակներ շարունակ, հնարավոր է եղել պահպանել հավատարմությունն ազգային գաղափարին և առաքելությանը, ապա դրանով, ըստ էության, ազգային գաղափարախոսության էվոլյուցիոն պատկերի ուրվագիծը կունենանք:

Ազգային կեցության արմատավորված սկզբունքներից կարող ենք առանձնացնել հետևյալները. սրբազան տարածքի բնիկ զավակի և պահապանի գիտակցություն; անմնացորդ և գիտակցված նվիրվածություն սեփական հավատքին; զգայուն և նախանձախնդիր վերաբերմունք ճշմարտության, բարոյականության և արդարության նկատմամբ; անձնվեր պայքարի պատրաստակամություն արտաքին հոգևոր և քաղաքական պարտադրանքների դեմ; երկյուղած, ակնածալի վերաբերմունք ավանդույթի, նախնիների և նրանց ժառանգության հանդեպ; հոգևոր, մշակութային և իմացական արժեքների ընդգծված կարևորում; հոգևոր և բարոյական հեղինակությունների ինստիտուտի բարձր կարգավիճակ; պատասխանատու և շահագրգիռ վերաբերմունք մատաղ սերնդի ապագայի նկատմամբ; հասարակական բոլոր շերտերի ներկայացուցչական ներգրավվածություն երկրի և համայնքների կառավարման մեջ; պետական, հասարակական և սոցիալական շերտերի միջև փոխհարաբերությունների արդյունավետ և արդարացի կարգ; հավատքի, արդարության և ներքին պատասխանատվության վրա խարսխված ռեաբիլիտիվ (ոչ ռեպրեսիվ) իրավական համակարգ; հասարակական, դասային, սոցիալական շերտերի հարգալից վերաբերմունք չգրված օրենքների ու վարքականոնների հանդեպ; հասարակական կառուցվածքի հիմքում ընտանիքի սրբության, անհատական կամքի ազատության և ազգային առաջնահերթությունների արդյունավետ համադրում՝ ուղղված ազգի հարատևմանը և այլն, և այլն…

Փորձենք նկարագրել պատմականորեն ձևավորված առաքինի հայի կերպարը՝ առանձնացնելով որոշ առաքինություններ, որոնց բազում օրինակները նախանձախնդիր ընթերցողն ինքնուրույն կգտնի հայոց պատմության յուրաքանչյուր էջում: Ինչպիսի՞ բնորոշ հատկություններ են ընկած այդ առաքինությունների հիմքում. անսահման նվիրվածություն հավատքին, հայրենիքին, պարտքին, ընտանիքին; բարեպաշտություն; մտքի ազատություն՝ հիմնված սեփական արժեքային համակարգի խոր գիտակցության վրա; արիության, ազնվության, վեհանձնության, կարեկցանքի, աշխատասիրության, հավատարմության բարձր գնահատանք; արժանապատվության և ամոթի զգացման խիստ չափանիշներ; բնատուր հակում մշակույթի, կրթության, իմացության նկատմամբ; ստեղծագործական ջիղ;

ընտանիքում տղամարդու և կնոջ հարաբերությունների ներդաշնակ մոդել; ընտանիքի սրբություն, դրա ներսում տարբեր սերունդների (առնվազն երեք սերունդ) փոխհարաբերությունների ուսանելի ավանդույթ; կնամեծար վարք; բնատուր նախաձեռնող խառնվածք; բնության հետ ներդաշնակ կյանք; ժուժկալ և համեստ կենցաղ; ուղղամտություն; խոնարհ խառնվածքի և ըմբոստության զարմանալի համատեղում; ակնածանք գիտելիքների և գիտուն մարդկանց նկատմամբ; հարգանք աշխատանքի ու մշակույթի մարդու և նրա գործի հանդեպ; հարգանք օտարների ավանդական արժեքների հանդեպ; օտար քաղաքակրթությունների, մշակույթների և մարդկանց հետ հարաբերվելու բնատուր ընդունակություն; հարգանք պետական կարգուկանոնի հանդեպ; հանդուրժողականություն ազգային փոքրամասնությունների նկատմամբ և այլն, և այլն…

Պարզ է, որ վերը նշված սկզբունքային արժեքներն ու հատկանիշները, և ոչ միայն նշվածները, ժամանակի ընթացքում որոշակի փոփոխություններ են կրել, կատարվել են առաջնահերթությունների վերադասավորումներ: Մանավանդ վերջին մի քանի դարերում՝ պետականության կորստի և օտար գերիշխանության պայմաններում: Բայց հույժ կարևոր է այն հանգամանքը, որ ազգային և հասարակական կյանքը միշտ էլ ընթացել է այնպիսի բարոյահոգեբանական մթնոլորտում, որ անպայմանորեն խրախուսվել են ավանդական արժեքները և մերժվել ու պախարակվել են հակառակ հատկանիշների ու մոտեցումների ցանկացած դրսևորումներ: Դա պետք է վերագրել այն բանին, որ ազգային գաղափարը և առաքելությունը հազարամյակների ընթացքում այնքան խոր են արմատավորվել ազգային հոգեմտակերպի մեջ, այնպես են հղկել ազգային գաղափարախոսությունը որպես կեցության համակարգ, որ նույնիսկ XIX դարից սկսված պատմական նենգափոխումները, Մեծ եղեռնի բերած մարդկային, նյութական և տարածքային հրեշավոր կորուստները, 70 տարիների պետական աթեիզմի և ազգերի համահարթեցման ագրեսիվ նկրտումներն ի զորու չեղան հայությանն անվերադարձ զրկել իր պատմության ճշմարիտ տրամաբանությունից: Ինչ խոսք, սթափ հայացք նետելով մեր օրերի իրողություններին՝ դժվար չէ փաստել, որ վերը նշված առաքինությունների զգալի մասը ոչ միայն դուրս է մղված անհատական և հասարակական կյանքից, այլև դրանց մի մասը սկսել է միամիտ, ծիծաղելի և հնացած համարվել հասարակական որոշ շերտերի գիտակցության մեջ:

Ավելին, հասարակական փոխհարաբերություններում գերիշխող են դառնում այնպիսի հատկանիշներ, վարքի այնպիսի դրսևորումներ, որոնք

սկզբունքորեն հակասում են ավանդական ազգային արժեհամակարգին և միշտ էլ դատապարտելի են համարվել: Գուցե ոմանք, ովքեր հուսահատված են այս տխուր իրողություններից, հակված կլինեն մեր առաջադրությունները միամիտ և ժամանակավրեպ համարել: Բայց տրվել նման տրամադրությունների՝ նշանակում է, որ մենք համաձայն ենք ինքնության գրավականի կորստին: Ազգային գաղափարախոսությունն ազգային գոյակերպի պահպանիչ համակարգն է, որը կոչված է ինչպես առողջ և ներդաշնակ պայմաններ ազգին ապահովելու, այնպես էլ, առանց սեփական ինքնությունը վտանգելու՝ այլոց հետ հարաբերվելու համար: Առաջնորդվել այսրոպեական, թվացյալ պրագմատիկ մոտիվներով, առանց անդրադառնալու, թե ինչ արժեհամակարգի հիման վրա ենք վճիռներ կայացնում և ինչ կորուստների գնով, կնշանակեր կամովին օտարվել ազգային գաղափարախոսությունից, հետևաբար նաև՝ ազգային գաղափարից ու առաքելությունից: Դա, իր հերթին, կնշանակեր, որ այսօր մեր առջև ծառացած բոլոր ներքին ու արտաքին մարտահրավերներին արձագանքելու մեր մեխանիզմները զրկում ենք ճշմարիտ կողմնորոշիչներից՝ այդպիսով վտանգելով մեր միակ օրինական և անգնահատելի իրավունքը՝ հարատևելու իրավունքը:

Բավական է ազգային առաքելության գիտակցության դիրքերից դիտարկել այսօրվա բոլոր մեծ ու փոքր խնդիրներն ու դժվարությունները, որպեսզի պարզ դառնա, որ դրանք այնքան էլ ծանր ու անհաղթահարելի չեն, որ մենք դատապարտված չենք միայն գոյատևման ստորացնող հարցերով զբաղվելու, այլև ընդունակ ենք շատ ավելի մեծ կենսագործումների:

Եվ, որքան էլ պարզամիտ թվա, բոլոր իրական հիմնախնդիրների լուծման բանալին աստվածային նախախնամությամբ մեզ տրված առաքելությանն է պահ տրված: Կվերականգնենք մեր գիտակցված հավատարմությունը մեր առաքելությանը՝ շատ հարցեր կգտնեն իրենց բնական լուծումները: Հակառակ պարագայում մենք անպաշտպան ենք մնալու եղած ու գալիք մարտահրավերների հանդեպ:

Սթափվելու, բարդույթներից ազատվելու, լրջորեն մտորելու և համապատասխան հետևությունների անհրաժեշտությունն այժմ ծառացած է յուրաքանչյուր հայի, հասարակական կառույցների, պետական մեքենայի և ողջ ազգի առջև: Եվ եթե յուրաքանչյուրս իր տեղում և բոլորս համատեղ կամք ցուցաբերենք շտկելու այս տխուր իրավիճակը, դուրս գալու անէացնող թմբիրից, տեր կանգնելու մեր պատմությանը և ապագային, ապա «ինչպե՞ս» հարցին կպատասխանի ազգային ծրագիրը: Եվ այս հարցում է առաջին հերթին անհրաժեշտ այնքան տարփողվող ազգային միասնությունը:

11. Հայոց ազգային ծրագիրը

Վերն արդեն նշել ենք, որ ազգային ծրագիրը և պետականությունը սերտորեն փոխկապակցված են և իդեալում ենթադրում են պետական կառույցի և հասարակության առավելագույն փոխըմբռնում և փոխադարձ վստահության մեծ պաշար: Տվյալ պարագայում փոխըմբռնումը նշանակում է, որ հասարակության մեջ գերիշխող են ազգային ինքնությունն ապահովող հոգևոր-կենսական արժեքային համակարգի վերականգնման ձգտումներն ու կամքը, իսկ պետական կառույցը պատրաստակամ է իր ողջ կազմակերպական կարողություններն ուղղել այդ գլխավոր խնդրի իրագործմանը: Սա է ազգային պետականության գլխավոր հատկանիշը: Ակնհայտ է, որ ազգային ծրագիրը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է պետական և հասարակական ջանքերի համակողմանի և նպատակամղված համադրում: Այն պետք է դառնա խոր և համակողմանի քննարկումների առարկա, և դրա գլխավոր ձևակերպողներն ու նախաձեռնողը պետք է դառնան բոլոր շահագրգիռ անհատներն ու, անպայման, պետությունը: Ակնհայտ է, որ այս աշխատանքի շրջանակները թույլ չեն տալիս ազգային ծրագրի մեր տարբերակը ներկայացնել անհրաժեշտ լրջությամբ: Դա առանձին և ծավալուն գործ է, որը հստակ գծագրություն կստանա միայն ընդհանուր և համակողմանի քննարկումների արդյունքում: Սակայն վստահաբար կարող ենք պնդել, որ ցանկացած ազգային ծրագրի ակունքում և հիմքում պետք է լինի ազգային գաղափարի, առաքելության և գաղափարախոսության բացահայտման և ներդրման խնդիրը մեր ազգային, պետական, հասարակական կյանքի բոլոր և, առաջին հերթին, կրթական, մշակութային ու քարոզչական ոլորտներում: Առանց այդ հասկացությունների բովանդակության մեջ խորամուխ լինելու և ընկալելու, մենք կմնանք ռեֆլեկտիվ ընթացքի պատանդը, ինչը լրջորեն վտանգում է մեր՝ որպես ազգ և քաղաքակրթություն պահպանվելու և աստվածային ծրագրում մեր առաքելությունը մինչև վերջ իրագործելու հազարամյակների պատգամը: Ակնհայտ է, որ պարտականությունը կարող է կատարվել կամ չկատարվել: Բարոյական արարածը չի կարող ազատվել աստվածային ծրագրի իշխանությունից: Մենք այն կարող ենք կրել մեր ճակատագրում կամ որպես օրհնություն, կամ որպես անեծք: Եվ մենք ենք կատարելու այդ ընտրությունը:

Ապրիլ, 2007թ.

ДРЕВО САМОИДЕНТИЧНОСТИ

Людвиг Хачатрян

Резюме

Национальная идея, национальное предназначение, идеология и программа – эти понятия для современной Армении и нации в целом, переживающих серьезный идейный кризис, имеют фундаментальное значение.

Почти во всех работах, рассматривающих задачи, стоящие перед страной сегодня, отмечается насущная необходимость выявления национальных идеологических предоснов определения доминирующей системы ценностей, нравственных и политических ориентиров. К сожалению, некоторая размытость терминологии, неточное употребление понятий, отсутствие содержательной конкретики зачастую ведет аналитиков к неразберихе в суждениях и заключениях.

В данной статье рассматриваются вопросы содержания и взаимосвязи указанных понятий-проблем, предлагается их разграничение, описание и формулировки. Анализ общих проблем автор проводит в контексте армянских реалий, на фоне определенной исторической картины.